ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Տերյան փող., 44, հեռ.՝ (+374 11) 518 401,
էլ. փոստ՝ kentron@yerevan.am

«01» 03 2021թ.

№ 155-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության առաջատար մասնագետ Հ.Մարգարյանի կողմից 25.01.2021թ. կազմված թիվ 037602 վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության հիման վրա հարուցված վարչական վարույթում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու համար նյութերը նախապատրաստող հանձնաժողովը /այսուհետ՝ Հանձնաժողով/, 26.02.2021թ. տեղի ունեցած նիստի ընթացքում քննեց 25.01.2021թ. կազմված թիվ 037602 արձանագրության մեջ նշված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործը, որի համաձայն՝ Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի կողմից Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 18 հասցեի դիմաց առանց թույլտվության իրականացվել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Գործի քննության ընթացքում Հանձնաժողովը, էական փաստական և իրավաբանական հանգամանքների հետազոտման արդյունքում, պարզեց, որ Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանի կողմից կատարվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 169.16-րդ հոդվածի 10-րդ մասով /առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումն ու իրացումը / նախատեսված վարչական իրավախախտումը:

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները և գործի քննության ընթացքում պարզված հանգամանքները, ղեկավարվելով Օրենսգրքի 23-րդ հոդվածի երկրորդ կետով, 169.16-րդ հոդվածի 10-րդ մասով, 219.1-րդ և 281-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 07.05.2010թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ

պատվիրակելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանին Օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 10-րդ մասով ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական տույժ 80.000 /ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

2. Առաջարկել Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանին միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ և Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն 80.000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ վարչական տուգանքը վճարել սույն որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ վճարում կատարելով կենտրոնական գանձապետարանի 900015213110 հաշվեհամարին: Օրենքով սահմանված ժամկետում տույժը չվճարելու դեպքում այն կարող է բռնագանձվել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

3. Կայացված որոշումը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով կուղարկվի Ա/Ձ Գևորգ Հովհաննիսյանին:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական /ՀՀ վարչական դատարան/ կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԻԿՈԼԱՅ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ